զրա հետ և ապա մահրամատն պատմում է իւր և  
վաճառականի բարեկամութիւնը: Որդին երախտա-  
գիտութեամբ նւիրում է իւր բոլոր փողերը վաճա-  
ռականին, վերցնում է սաղը և երկում.

Թէհ ընծաներս ըիշ էր  
Խնդրեմ ներս վաճառական,

Միտքդ հետ բարուն փրկիշ էր,  
Հոգոյ տէր ես վաճառական:

Իմ հայրս միխթարեցիր,  
Կեանքդ սիրոյս շարշարեցիր,  
Մեծ Մովսեսան յարմարեցիր,  
Ազգասէր ես վաճառական:

Այլ ինչ ասեմ քեզ համեմատ  
Քառն զժոխըն լինիս ազատ,  
Սոնես Սրբահամետն հաւատ,  
Ենդ լոյս երես վաճառական:

Գովիմ հիւրասիրութիւնդ,  
Վատուած օրնէ տեզդ ու տանդ  
Գատմոս երգէ ազգանունդ  
Հօրազդէր ես վաճառական:

Վաճառականը մեծ ընկունելութիւնն է ցայց  
տալիս մեծ ճաշկերոյթ է պատաստում և հրաւի-  
րում է բարեկամներին. հիւրերին ուրախացնելուց  
յետոյ մեծ բազմութեամբ և թագաւորի տուած հըո-  
վարտակի համաձայն առաջ ընթացան զօրքերի հետ  
շրով ճանապարհ զցին և այսպէս առաջ ընթաց զօր-  
քերը ճանապարհին որոշ տեղերում փոփոխելով  
հասցըին մինչեւ շինական սահմանները, ուր ճանա-  
պարհը 7 ճիւղի բաժանեած տեղում շինուած էր

թագաւորի հրամանով մի բաղանիր, որ ամեն մի մարդ տանց փողի լողանալուց յիտ պարտաւորւած պէտք է զլխի եկածը պատմէր, որպէսզի թագաւորը հընաբաւորութիւն սննդայ իմանալ թէ ում է պատահել իր աղջիկը, որովհետեւ այժիկը իւր մանկաթիւնից արստամբել էր փերիներից և աներեսլից եղել մինչև այժմո. զբացների և հմայողների ասելով, պէտք է երեայ այն մարդուն որ աշխարհիս մէջ ամենից գեղեցիկն է:

Սանդրսը ըստ սովորութեան, ձիանները թողեց Պատմոսի մօտ զնաց լոկանալու, զուրս գալիս փող սովեց տալ բաղնեպանը հասկացրեց, որ այս բաղնիրում լոկացովներից փող չի պահանջում, զու պէտք է պատմես ըստ զլխի եկածը փողի տեղ, Սանդրսը անտրամադիր լինելով որրան ստիռեցին չ'կարսպացան պատմել տալ փերջը ստիռուցան ծեծելով զուրս անել բաղնիրից. Պատմոս տեսնելով այդ կոպիտ վարմունքը կոկիծը տակեց ջանը սազը վերցրեց ու երգեց.

Պատճառը ինձ պէս չար որդին չ' նայ չայրս փետահար են անում բայ եմ պահ Զեմն եմ բնիկել սրուրդին, Շիրտոս նետահար են անում, Կայ Արհեստական ցըզ Արհեստաւոր է աշխարհն ։ Եղան մէզառաւ Իմաստուն կասնեն այս զարի

Անմեղ գալած ճանապարհին  
Քեղ փետահար են անում:

Վարւիր աշխարհի հետ վարւիր  
Ստախոսութիւններ սովորիր  
Պատմոսիս տես միտիթարւիր  
Խօսիս փետահար են անում:

Գնաց լողացաւ, զուրս զալիս բաղնեպանի կարգագրութեամբ սկսեց պատմել մեղ արգէն յայտնի արկածները, որ զլխովը անցել են. պահապանները գտնելով իրանց սրոնած մարդուն տանում թագաւորին են ներկայացնում: Թագաւորը ինչ արհեստ կիտենալը որտեղացի լինելը իմանալուց յետոյ տում է, թէ աղջիկս զտար բերիր ինձ մօտ, աղջիկս և թագաւորութեանս կէսր բեզ կ'տամ, թէ շըրերիր զիզկ կարել կ'տամ, որպէս խարերայի:

Պատմոս թագաւորից հինգ օր ժամանակ է խնդրում և իրաւունք ստանում որ պալատի բոլոր գնեները իրան տառչ բաց լինին. պարտիզում մահպալիս խնդրում են Աստուծոյ որ այս նեղութիւնները անցեցնէ իրանից և երկար մահպալուց յետոյ նոտեցին մի ծառի տակ, որի ճիւղը երին եկան նոտեցին աղաւնիները, Պատմոս տեսնելով աղաւնիներին յուղւեց, վերցրեց սազը և երգեց.

Այ աղաւնի ահա ժամ է, սիրավ սէրդ ճանաշէ, Վասն քո հոգուդ-ինսամէ, Աստուծ տէրդ ճանաշէ,

Մասցել եմ մորմորալավ, դիշեր ցերեկ անդադար  
Ինչ սիրով նկտահարել ես հարած վէրբդ ճանաչէ.

Թէ ես առել թաշունի պիո, միշտ անդադար  
թաշում ես

Հանդոտովթիւն մէկ տեղ շունիս բոլոր աշխարհ  
շրջում ես

Մէկ աշքիս գիմաց կերեիս, մէկ այներե կոր-  
շում ես

Եւ որ բեզ սերունդներ ունիս, հայրդ մերդ ճա-  
նաշէ:

Ով Զօհայի Զառզօհալի մէկ իմ լուրը իմացիր  
եմ արունելին պատճառ մի լոլի, ձեւն է զուրը  
իմացիր

Քո սիրելի Պատմոն եմ, իմ տխուրի իմացիր,  
Մարդ խարոզը Աստծոյ խարէ, այդ պատսերը  
ճանաչէ:

Երգից յետոյ ազանիները թռան զիացին.  
Պատմոսի մօտ գտնուող այգեպանները և ուրիշները  
տեսնելով նրա զրութիւնը ցաւակցութիւն են յայտ-  
նում և խոճում են վերան, նկատելով Պատմոս այդ  
ես առաւել բարբուռում է և սկսամ է նորից երգի.

Պատճառ ունիմ վառիս այրմիս կեր զառնամ,  
Քանի որ չքառն է աստղս, հոր է հուր

Ճետ շոկոց բորբուռեմ, օդը համբառնամ,  
Առանց սիրականիս, կիանքս զուր է զուր:

Արեին առաջնորդ է լուսաբերը,  
Գեղեցիկ է լուսնթաղի պատկերը,  
Փայլածուն է զոհացնող ամպերը  
Երեակն հիւր լուսնոյ տեղող ջուր է ջուր:

Պատմոս զինչ պատմես, ով է հասկացող  
Տարերըն է քո անցնող խորչես վատանցող  
Իմ ազանիս ունի նոյնալէս ծածուկ բող  
Ով որ չի ճանաչիլ իրաւ կուր է կուր...

Ազանիները նորից վերագարձան, Պատմոս  
տեսնելով նրանց շարունակից.

Խնայէ, խնայէ իմ մանուկ կիաներին,  
Ահա սպանում են, պատճառը զու ես,  
Ինչ եմ անում տայնակ, սուտակ բարն անդին  
Քո սիրուդ եմ եկիլ, իմ եարը զու ես:

Ահա բարկացել է կայսրդ ինձի  
Սաստկագոյն զուում է որպէս բաջ լնձի  
Զեռացուց հնոցը չինըը պղնձի  
Եթէ ազատ անես հնարը զու ես:

Հայրենինեց երկիրս թողի բո սիրուդ

Եթէ քո սրաւով է, արի շուտափոյթ  
Պատմոս արքայի գլուխ չլինի սուտ  
Այս իմաստաբան ճարտարը զու հա:

Աղանին նորից թռաւ և երեր ժամից յասոյ  
Վիրագարձաւ կիսաթռչուն կիսա-ազջիկ գարձած ի-  
շաւ ազրիւրի մօտ կանդնեց. ծաւաները ուղեցան  
բռնիկ ճշաց թռաւ ծաւի վրայ կանդնեց: Պատմոս  
ողերուելով երգեց.

Աստուած ինքը ստեղծեց բոլոր աշխարհ  
Թռչուններու մէջ զեղին աղանի,  
Զքեղ լըմբոներու ոչ կայ հնարի,  
Օդային մարդկային ցեղին աղանի:

Կազաշեմ կազերսեմ, եկ մոլորուած եմ,  
Քո սիրուգ կրակով, վառուած խորւած եմ,  
Այդ բաններու հնարները սորւած եմ,  
Դարձեալ կերթամ հս իմ տեղին աղանի:

Եթէ սիրական հս Պատմոսին լու,  
Գիտեմ մեղաւոր եմ մեղքը իմն է,  
Վասն քո Աստուգ խօսալ միսէ  
Այսօր իմ պիճակը նեղ է աղանի:

Յետոյ աղանինին երգեց թեկութ իրար քսելով.

Եսը քո լւայ հս հալւեցայ մսմի պէս  
Սիրուգ սրով վիշտաւեցայ խոր սրովէս,  
Բարի եկիր իմ ուրախ օր իմ հանդէս,  
Բայց այլ ոչինչ էւել չունիմ իմ կեանքէս  
Քեզի ընծայ, քեզի մատաղ ով Պատմոս:

Այսքան տարի երբէք չէի մարդաձե  
Զգեցուցին աղանակերակ թռչնաթին  
ես լուսառու, զու լուսառու իմ արի  
Ամին կողմից Աստուած տուեց մեծ պարզե,  
Ինձ քեզ ծառայ, ինձ քեզ մատաղ, ով Պատմոս:

Դու իմ սոխակ, մինչ երբ բառնաս աղաղակ  
Եկ մուտ պարտէզ քաղէ վարդ և մանուշակ,  
Վերստին մեզ տէրը կազմեց նոր պսակ  
Թարզօհալիս հազիմ ունիմ միայնակ  
Քեզի ընծայ, քեզի մատաղ, ով Պատմոս:

Երգեց անմիջապէս յետոյ իջաւ ծառից, փա-  
թաթուեց Պատմոսի վկովը, համբաւելով միմեանց  
կարօնները տռան ալշիկը տասց, չնայելով որ քո  
ինսդրով կարուգացար փոխարեկել կերպարանքս մար-  
զու կերպարանքի, բայց էլի հայրն ինձ քեզ չի տայ.  
Պրանով մի վհատիր երբեք ես քեզ չեմ մոռայնայ:

Լուր տարան թագաւորին, թեգաւորը իւր պա-  
լատականներով դիմաւորեց և առօր փառօր ընդու-  
գունեց իւր պալատը. Պատմոսին հնարհակալութիւն

յայտնեց անթիւ թանկաղին բարեր և փող տւեց.  
Պատմոս ստիպւած վերցրեց և տուն տարաւ։ Հայրը  
տեսնելով սաստիկ վշտացաւ, ձեռնափայտը սադ տ-  
րեց ու երգեց.

Ասի սրգի մի հեշտանայ  
Աշխարհն է խափող տանող,  
Դանկից ոչ ոք չի կշտանայ,  
Մարզու հոգին է սպանող։

Զատ ժամանակ ես խնդրւայ  
Սէրը քեզի հեշտ կը թւայ  
Բոլոր կեաներիցո քանդւայ  
Ո՛չ զոյ տարտարոսից հանող։

Ունէի անդ անթիւ փողեր  
Եմին էլ անտեր եմ թողեր  
Սանդրասիս բաղդին զայ հոգեր  
Թշնամի զառաւ սպանող։

Պատմոս շկարտացաւ համբերել սկսեց երգել.

Այստափ չարշարանը, գատարկ մնալո  
Վայ է ինձ վայ է ինձ, իրափ վայ է  
Բաղմացաւ տրտումն սպրումն լալո  
Մահ է ինձ, մահ է ինձ իրափ մահ է,  
Եմ զլուխս որշափ, որշափ գար գնաց

կապիչ մի վարդ բաղի, շաւար պիաց  
Աշքերս միմնողեց նուրբ խաւար պիաց  
Պահէ ինձ, պահէ ինձ, հայրն իմ պահէ։

Պատմոսս է կարկամեալ, կար միշտ գլոււած,  
Անչէջ կրակներով վառւած ու խորւած.  
Սոխակն իմ պարտիզին սիրով չէր սորւած  
Ջահէ ինձ, շահէ ինձ իրաւի շահէ։

Երգով էլ շկարտանալով սրտի յուզմունքը հան-  
դսացնել, խր բժշկական գործիքները հաւաքեց  
պայուսակի մէջ բաղարից զուրո եկաւ. մի այլու  
մօտից անցնելիս այսեպահնը ձայնեց, «այ մարդ ալ  
ես, և ալր ես զիսւմ»։ Պատմոս լսելով պարտիզպա-  
նի ձայնը, սթափւեց մտածմունքից և սկսեց երգով  
պտտասխանել.

Ասն տեսնեմ, ինչ ես ասում այզեպահն,-  
Խթան կասաւ այդ բս լուրը ինձ համար  
Կորցրել եմ սիրականս սլաւաւկան  
Գառնացել է հոգի ու չուրը ինձ համար։

Դշգեւանն  
Մի վշտանալ եղբայր, փորը համբերէ  
Եւեռում է այս իմ լուրը քեզ համար  
Իմ տան տէրը մէկ միծ համբաւի տէր է,  
Պատրտստում է զինք ու սուրը քեզ համար։

Պատմոս

Հեմ գիտել, ուզիլ ուզիլ ես, թէ ինձ կ'որսաս,  
Զեռիդ որ բահմէ շինեցիր որ սազ  
Քո այդ քաղցրաբառդ թէ լինի որ սազ  
Այն դու ես պազ պարեւը ինձ համար:

Այզեպան

Իմ խօսքերս գաղափարիդ տեղ արայ  
Ազարակդ հնի է, կառէ թէղ արայ  
Դեղատուր ես հիւանդ տէրիս դեղ արայ  
Միջնորդ կառնեմ արրայրոյը բեղ համար:

Պատմոս

Պատմոսիս սրտին դառաւ մէկ մխիթար  
Դա էլ մի կարծիք է հետիդ մխիթար  
Հեմ գիտել ինչ ազգ ես, սեմիտ մխիթար  
Դրւած էր նախ այս տխուրը ինձ համար:

Այզեպան

Անունս Բագարատ ուզիլ հայ անուն  
Երեսուն ու վեց տառին կայ հայ անուն  
Ճրհեկեզից ազատ լինող հայ անուն  
Բորբոքեցաւ սրտիս հուրը բեղ համար:

Բագրատը և Պատմոսը հայ լինելով եղբայրացան Բագրատը պատմեց, որ բանի օր է լսել էր իրան մասին ժամանակ շունենալով չի կարողացել զնալ տես. ապա ներկայացրեց իւր տիրոջը, որ հիւանդ պառկած էր, հիւանդը իմանալով Պատմոսի բժիշկ լինելը դիմում է, և մի քանի օրուայ լինթաց-

քամ՝ բժշկում է և որպէս հղբայր Բագրատին հօր ապրում է այզում Բագրատի մօտ բժշկուղ պարոնի տանը. այս պարոնը թագաւորի քրոջ որդին է և սինօդական անդամներիցն:

Պատմոսն ու Բագրատը երկար մտածում են որոշում մի օգապարիկ շինել, որի համար կանչում վարպետներին և Պատմոսի պատէրի համաձայն շինել տալիք: Պալատ մտած օրից աղջիկը հօր մօտից երբէք չէր հեռացել, որի գեղեցկութեանը զմայլած էր հայրը, աղջկան դուր չգալով այդպիսի կեանքը բահուարկութիւն է, ինդրում է հօրից որ թոյլ տայ իրան զնալ իւր պարտէզները մանկալու. թագաւորը բարկանում է, աղջկայ յանդուզն խօսքերի վրայ, հրամայում է գցել մահապարտների հնացը, բայց վերջը զիջում է պալատականների խնդրին և հրամայում շորս նածիսաների տանել խոպանցած այլու խարխուլ շիներում պահել քաւասուն օր խիստ հսկողութեամբ շրջապատելով այգին զինուրիներով, որ ոչ մի կիսակայութիւն չ'լինի. աղջկան տանելիս պէտք է անցնէին Բագրատի այլու մօտից Բագրատը և Պատմոսը ուզեցան հանգամանքից օգտուել և փախցնել Թարգօհալին բայց նախ բան այդ սկսեց երգել.

Ով նազելիս ուր ես զնում,

Զէ որ բեղ համար եմ եկել,

Զի է ցաւս շես բննում

Ելոշափ ճանապարհ եմ եկել:

Թարգօհալին խնդրում է՝ տանսղիերին կանգնել  
և ինքը երգում է.

Թարգօհալի

Ես եմ քս ցաւին ցաւակից,  
Իրաւ քեզ համար եմ զնում  
Վարդը չէ հեռու սոխակից  
Քս մորիդ յարմար եմ զնում:

Պատմոս

Թարգօհալի ինձ խաբում ես,  
Չուր տեղ արիւնս թափում ես  
Այդ խօսրերովդ սապում ես  
Ար անդագար եմ եկել:

Թարգօհալի

Եմ մոռանալ շարշարանքը  
Երկինք զետինք տէր և կիանք  
Մինչի պատրաստես քո սարք  
Քեզ օտար աշխարհ եմ զնում:

Պատմոս

Մի խարիլ խղճաւիխ Պատմոսիս  
Ափսոս շես որ սուտ կ'խօսիս  
Արարատեան քարձ Մասիս,  
Նրանից մեծ սար եմ եկել:

Թարգօհալի

Միթէ երգումներս զար է  
Աստուած ձանչէ յատդ համբուրէ,  
Թարգօհալիս յոյժ տիսուր է,  
Հիւանդ եմ և տիտար և զնում:

Երգից յետոյ Պատմոս ուզեցաւ բանելավ աղ-  
ջկայ ձեռքից բերել իր կեցած այգին, պահապահինե-  
րը իսկոյն զնդակահար կանկին եթէ այսկազմից  
Բագրատը ձայն շտար. «Զհամարձակէք եզրօրս ձեռք  
բարձրացնել բալորիզ մէկ-մէկ կ'կատարեմ»: Պատմո-  
սին աղատելուց յետոյ ուզեցաւ սպաննալիքներով  
Թարգօհալուն եռ առնել ձեռքերէն, այս անգամ զին-  
ուրները խմբովին գրնձ տւեցին, բայց այգու պատը  
արգելից գրանց հոսանքը, հէնց այդ ժամանակ այ-  
գու տէրը իր արագրնթաց նժայզը հեծած, զէնք ու  
զրահ կապած, սպաննալից կերպով տուած խազաց.  
բոլոր զօրքը սրան տեսնելով երկիւզից ցիրուցան  
եղան. Թարգօհալին հանգամանքից օգտուելավ, իւր  
նաժիստներով անցնում է այգին. այգու տիրուհին  
Հօրուրը սիրով ընդունում է և անոմիշապէս զնում է  
թագաւորի մօտ, շատ խնդրելուց համաձայնեցնում  
է, որ Թարգօհալին քառասուն օր շարունակ իրան  
մօտ պահէ, և մինհայն ժամանակ նրան խրատէ զաս-  
տիտրակէ:

Մի անգամ այգում նաժիշտների հետ մանգա-  
լիս, հանգիպեց Պատմոսին վերցրեց սալը և երգեց.

Պատմոս

Մեր պարտէզին ծագեց արի  
Ճարժուն հովեր գագարւած է  
Վարդն է զիմաց բանել բարի  
Ամնն ծաղիկ զարդարւած է:

Թարգօնալի  
Հիւր եմ եկել սիրականիո

Թէ խսրհուրդն կատարւած է:

Աշրիս գիմաց ծառ նմանիո

Սէրդ սրտիս նկարւած է:

Պատմոս

Երգեց սոխակն ինձ աշբախոյ

Հեղ աղաւնին մեղ հիւր զալուս

Գաշտերն ուրախացան խայտալուս

Թշնամու սիրտը քարւած է:

Թարգօնալի

Պարդ մի խօսիլ լիր խորիմաց

Աշխարհն մէկ տան է խելաց

Թէ ոմանը լինեն հասկացած

Չորս անկիմը պաշտրւած է:

Պատմոս

Ջրջան է զառնում անգակար

Խորշերու մասն է անկատար

Երանի այն աւուր հաղար

Պատմոսն երամով շարւած է:

Թարգօնալի

Վեր նայէ աստղերն համարէ

Քառասուն օր մերն համարէ

Բորբորւած մտքերն համարէ

Թարգօնալիս միշտ վառւած է:

Եղում ճաշելիս իր ձեռքով մի բաժակ գինի

տես Թարգօնալուն. սա խոր չնորհակալութիւնը  
յայտնեց հետեւալ երգով.

Թարգօնալի

Քո ձեռօք բաժակ տւեցիր

Սա սիրոյ նշան Պատմոս

Իմ կեանիրս որպէս թւեցիր

Առւտուրին էժան է Պատմոս:

Պատմոս

Ես բեզ ետու կարմիր գինի

Տէրէն հրաման է աղջիկ

Որպէս տիրող կամքը լինի

Մեղ այս բանկից հանէ աղջիկ:

Թարգօնալի

Ես ուրախ եմ այդ բանի մէջ

Սէրդ հուր է սրտիս անշէջ

Մի պարդ խօսի կ'զառնայ վէճ

Միտք ծածուկ ցանէ Պատմոս:

Պատմոս

Երբոր աշքս տեսաւ բեզի

Բացայայտ խօսիմ մէջ պարտէզի

Երբ հասնինը բաղաքն Պարիզը

Այն օր պատրիակ է աղջիկ:

Թարգօնալի

Անունս է Թարգօնալի

Երգելութիւն հոգիս կ'հալի

Ինձ յայտնի գերի ես տալի

Քո սրտիդ հարցանէ Պատմոս:

Պատմոս

Զի ես այզրան երկիւղալի  
Մեռնեմ բեղ գերի չեմ տալի  
Պատմոս այսօր ուրախալի  
Կարծեց Հայաստան է աղջիկ:

Սիրահարների վասմոռնեն խօսքերը յիշեցրին  
Բազրատին իւր ընտանիքը, խորը ան բաշեց, վեր-  
ցրեց զինու բաժակը ու այսպէս երգեց.

Այսօր իմ ցաւակից սոխակն ու վարդը  
Խօսակցութիւնն արին, ես հիացայ յաւ  
Այլեպան է դառել ինձ ովէս տմարով  
Ունէի հայրենիք սիրական անուշ:

Հեռացայ երկրս, այլ ուր տեղ փախչեմ  
Դենդանի մեռած, իրաւի սաղ չեմ,  
Միթէ ինքս քար եմ, ստեղծուած հող չեմ  
Թշնամեաց առաջին, մատնեցին անշուշտ:

Անու համար եկայ այս երկիրս օտար  
Չէ ոք չէր ցաւակից սրտիս մխիթար  
Թէ Աստուած կամենայ ինձ էլ հետդ տար  
Մինչի մահ պահպանէ եղրայրս զգուշ:

Մելիքի սրդի եմ իրաւ մեծատան  
Տաճկաց տէրութիւնը արաւ հրաման

Բոլոր տունն տեղս արին ցիրուցան  
Դարձեալ պահանջամ է վեց տաղանթ գուռաչ:  
Եղմիրու բաղաքից ես եմ արսորուած  
Տանիերկու տարի է աստ եմ մոլորուած,  
Անունս Բագարատ սիրաս է խորոված,  
Դառել եմ խելագար մնացի ամրուչ:

Այգետէրը լսելով պրանց երգեցովութիւնը կան-  
չեց իւր մօտ և ստիպեց, որ իրանց աերկիրը, աղ-  
զութիւնը և կրօնը դովարանէ: Առաջին անգամ վեր-  
ցրեց սաղը երգեց.

Երկինքն էր ջուր, վետինը էր ջուր ծով էր ծով  
Հողի էր Աստուածոյ շրջէր անդադար  
Ստեղծեց չորս տարերը, խոկ խորը մտքով  
Հուրն, հողմն, ջուրն, հողն հաւասար:

Այգետէրը չհասկանալով այդ, զիմեց այգե-  
պանին որ ինքը երգէ, նա էլ սկսեց.

Բազրատան

Կրակից գոհացուց հրեշտակաց զառ,  
Քամին Տեշեց իննը մաս խկ արդար  
Հողն ջրից բաժնեց արաւ երկու մաս  
Միացած մարդ շինեց, նախ Ագամն է կար:  
Պատմոս

Աղամայ ծննդին երբ մեղանչեցին

Պաշտեցին ձեռազործ, ոչ ամաշեցին  
իրենց ստեղծողը երբ չ'ճանշեցին  
Այսու տեղաց ջրհեղեղն էր մի մեծ դար:  
Բազարատ  
Ներբովմն էր որ շինեց աշտարակն մեծ  
Սաստիկ հողմն հարեց հիմնայատակ բանդեց  
Եօթանասուն ազգի լեզուն բաժանուեց,  
Ամեն մարդ մերցրուց իւր մտքին յարմար:  
Պատմոս  
Պատմոսս Հայաստանից եկաւ Զինաստան  
Տեսաւ մեկ պատուական անուանի իշխան  
Ենքը արքայի ցեղ ազգի մէջ արձան  
Իւր կրօնիքին հաստատ բնութեամբ հանձար:  
Բազարատ

Զինաստանը Սուտակ և Դահնակ  
Բազում բանի տեղեակ ոչ դոյ հանգանակ,  
Բազարատս այզեղան մրգերին ահնաս-ղակ  
Բարիքները զովական հազար ու հազար:  
Այս անգամ զոհ մնաց երգերից, միայն ցաւակ-  
ցութիւն յայտնեց որ իրանց կրօնից չեն և ինդրեց  
որ փակը իրան տօնին էլ զան ածելու, խօսք տա-  
լով իշխանին հեռացան իրանց օպապարիկի պակաս  
մնացած մասերը լրացնելու, իսկ Թարզօնալին մնա-  
ցել էր կանգնած իշխանի մօտ, իշխանը նկատելով  
տասց շինի խնդիր ունիս, Թարզօնալին համարձա-  
կութիւն ստացաւ և սկսեց երգով յայտնել խնդիրը.

Գու իմ հոգու եղբայր, դու իմ աղբական  
Քեզանից խնդրում եմ խնդիրս ոս է;  
Մրբայի քեռորդին և իմ պատական  
Քո ծառաներուն միշտ ժամ ժամ խնայէ:

Մեր ազգի մէջ ունինք այսպիսի մէկ ծէս  
Մեր ծննդեան օրեր ամսում ենք հանդէս  
Վեհ, բարձրագոյն իշխան հասկացիր սրտիս  
Վազն երգիչներուն այսպիսօք շահէ:

Լիովին իրաւունք տուր զօր ինչ կ'հարցեն,  
Գիտեն խազալիքներ թուզ ի մէջ բերեն,  
Զէ մեզի պատկառանը բանի այստից չեն  
Թէ որ չկատարես Զօնալուս մահ է:

Սինօպապիտը չհասկանալով աղջկայ խնդրի  
խոկական միտքը, ասաց, թուզ քո առածի պէս լինի  
այս անգամ, Թարզօնալին այս բանի յայտնելով  
այգեպանին ասաց, որ սրանից յիտոյ ամեն բան  
կախւած կլինի ձեր ճարպիկութիւնից և ձեր անհ-  
լիքից:

Եպետէրը հարցնում է Սանկրսուից թէ ինչ նը-  
պատակսի են այստեղ եկել. Սանկրսոս պատմում է  
մանրամանարար իրանց զլիսի եկածները, թէ ինչ-  
պէս թագաւորի աղջիկը աղաւնու կերպարանը ե-  
րեացել է Պատմոսին և խնդրել է որ իրան անպատ-  
ճառ գտնէ ու նորից թուել է. Իշխանը պատմու-

թիւնը իմանալով շատ մոտածմունքի մէջ ընկառ թէ  
բնչպէս օգնէ սրանց, վերջը առաջարկեց թէ մեր  
կրօնը ընդունէք թագաւորի ազդիկը տղիդ տալ կը-  
տամ և վերջը թագաւոր կնստեցնենք մեր երկրի  
վրայ. Սանդրոս լսելով իշխանի առաջարկը սաստիկ  
վշտացաւ ու սկսեց երգով ոլտասսանել.

Իմ հայրենիք, նախնիք զնաց ի՞նչ հետրով,  
Պէտք է ես էլ զնամ այն ճանապարհով.  
Թէկուզ ինձ սպանես սրով կամ նետով,  
Իմ սրդիքս էլ հետ ինձ զան ճանապարհով:

Ինչ կանեմ աշխարհի ապրուսան ու մալը  
Գծւար է Սոտծուն սպատասիան տալը  
Հասկացել իմ ձեր կրօնքի սխալը,  
Զեմ զնալ տարտարոս լայն ճանապարհով:

Թէ թագաւոր գառնամը չինաստան զատեմ  
Դարձեալ հոգու կողմից ալրատ եմք  
Կանչեմ կենաց խաչը ցաւս զանդատիմք  
2ը թողնու մեր կինաց տան ճանապարհով:

Սանդրոսիս սպարքն էլ այստեղ չժմայ,  
Հայ ազգի ոնսնու եմ Հայաստան ծնայ  
Ցոյս ունիմ տո. Աստուած երթէ շեմ զնայ  
Մոլոր ազգի ցիրուցան ճանապարհով:  
Մինօդապետը սաստիկ բարկացաւ «զուն որ իմ

կրօնին չես հաւանում, նսյն է թէ, ինձ էլ չես հա-  
ւանում, տօնախմբութիւնս անցկացնեմ խազակու-  
թեամբ, յետոյ ես ձեզ ցոյց կտամ թէ ով եմ հս-  
ասաց սինօդատեալ բարկացած. Սանդրոս տրումած  
զնած եղելութիւնը պատմեց տղաներին. Պատմոս,  
Բագրատ և Սանդրոս յայները Սոտծուց չկրեցին  
սկսեցին ալօթել, զիշերը Պատմոս երազում տես-  
նում է մի սպիտակ ձիաւոր զինաւոր բարկանում  
է այդետիրոջ վերայ, որ նեղութիւն է տալիս իւր  
ծառաներին. այդ մինհօյն ձիաւորը երկում է և այ-  
դետիրոջ սպանեալով առում է, եթէ բո տան զրո-  
ւուածներին նեղութիւն տուիր բեղ կոսպանեմ և ձեր  
ամբողջ ազգը բնաջինջ կանեմ. այգետերը երկիւզից  
զարթնում է կանչում է, մօրը, յայտնում է երազը  
և խնդրում է հնար, մայրը ասում է, ես այդ բոլորը  
զիտէի, վախենում էի որ յայտնէի աւելացրեց լաւ  
է երկրաւոր թագաւորից պատժւել քան թէ Սոտծոն  
բարկացնել և այսպէս խօսակցեցին մինչեւ լսոյ:

Հետեւալ օրը, որոշեալ ժամին հաւարեցին  
բոլոր հրաւիրեալները, ի միջի այլոց թագաւորը և  
թագուհին. հացկերոյթի ժամանակ թագաւորը պատ-  
վիրեց իրանց աշուղներին, որ ածին, բոյրը տանտի-  
կինը թոյլաւութիւն ստացաւ թագաւորից, որ իրանց  
աշուղներն էլ երգեն, որոնք արգլի փոխած շրիերով  
նստել էին հրաւիրեալների մէջ, ներկայ էր և թա-  
գաւորի ազգիկը. Առաջի անզամ սկսեց երգել թա-  
գաւորի ազգիկը,

Թէլպահին

Անիս պատրաստութիւն պատերազմելու  
Թնդանօթ և վնդակ ածուխ հետք  
Առիւծս փափագ է այծեամ ճզմելու,  
Խորտակէ սոկորքն վլուխը հետք:

Պատմոս

Զրահս պատրաստ է պատերազմելու  
Նիզակս ժաժ տամ սլարը հետք  
Լայնալիճ աղեղներ սնիմ կազմելու  
Առիւծդ սովանեմ իւր ծաղը հետք:

Թէլպահին

Զօրքի զիմաց մէկ հետեակին ինչ կանէ,  
Կենդանեաց զէմ հիւանդ զիւակն ինչ կանէ  
Մեծ ծովի մէջ բորբոք կրակն ինչ կանէ,  
Նախ հուրը կոպառէ և ծուխը հետք:

Պատմոս

Անիմ երիվարներ գու շես տեսանել  
Նրանց մէկի մեխը շես կարող տանել  
Քո զօրքերուց նման շատ եմ սպանել  
Բերդերդ կաւերեմ բաղարը հետք:

Թէլպահի

Թէլպահուս զիմացը շատ մի հշտանայ,  
Խոսրերդ զատարիէ զես շեմ վշտանայ,  
Լիաթանը զեռունիքով չի կշանայ  
Պանտամ է լիռներ և ծուխը հետք:

Պատմոս

Պատմոսս թի առեալ օդը թոշում է

Ապա խառն բոլոր աշխարհ շրջամ է,

Լիաթանդ փայլաստղիցը կորչում է  
Եշեում է անդունդը շարք հետք:

Թագաւորը շատ հաւանեց և առաց որ շարու-  
նակին, այս անդամ սկսելու հերթը Պատմոսին էր  
նա էլ սկսեց:

Գիտնական Թէլպայի ինձ պատախան տնւր,  
Ագամայ զիլիցը, որբան դար անցաւ  
Այն ինչ սիւն էր կէսը հուր էր կէսը ջուր  
Ինչ օրինակ տուց ինչ նկար անցաւ:

Թէլպահին շկարովացաւ պատախանել. Պատ-  
մոս կրկին շարունակեց.

Ինչ թոշուն էր, ունէր ժամուն մի պարզի  
Հարիւր ութանասուն հազար ծնաւ միաձի  
Ո՛չ կարմիր են, ոչ սպիտակ և ոչ սի  
Բնաւ բան չնատաւ անդադար անցաւ:

Այն ինչ ըար է մուրճանարես ճարիլ չի,  
Ի՞նչ զրաստ է, որբան ճաշէ յափիլ չի  
Ի՞նչ պատկեր է երենալ չի թաղիլ չի  
Պատմոսիս խոսրերը միշտ յարնար անցաւ:

Թագաւորը հետարբիր նայեց Պատմոսին և

ասաց այդ աշուղը մրտեկացի է, որ իմ աշուղին յազթեց և ինձ ամօթահար արեց:

Քոյքը ընկաւ թագաւորի ստները և ասաց այդ այն մարդի է, որ մեզ բոլորիս վերայ երախտիք ունի: Նա բո Թարգօհալի աղջիկի ազատեց զերոթիւնից, որ ապատամբել էր փերիներից և իմ որդին, որ մերձ ի մահ հիւանդ էր բժշկեց: Թագաւորը այս լսելով, խոճանարուեց ու ասաց. «Սիրելի քոյք, ի՞նչպէս ես կամնեում, որ ես վարուեմ Պատմոսի համար»: Դուքնարին (քոյքը) ասաց, «Ես կամնեում իմ բո Թարգօհալի աղջիկի նրան տրժան. Պատմոսը գիտնական մարդ է, նա շատ արժանաւոր գահակալ կարող է լինել քեզ, ապագային ու կարող է բո գահը ժաւանիքել»: Թագաւորը քրոջ խօսրերին հաւանութիւն տալսկ գարձաւ պալատականներին և նոցա կարծիքը հարցրեց. պալատականները միաբերան կանչեցին, «կէցցէ թագաւորի որդեկիր վիսան, կէցցէ, թագաւորի որդեկիր Պատմոսը»: Այս ձայնի վերայ, Սանդրոսի աշքերից արտասուրի կաթիլներ ցայտեցին և զգացուած երգեց այսպէս.

### Հայրը

Երամից բաժանեաւ սիրահար սոխակ Վալսի սէրն, փուշի ցաւը մտածէ, եւր ծովերի միջին ընկղզմած լողակ, Անդերծ թակարդի համբաւը մտածէ:

### Պատմոս

Սոխակ երամով կանգնած է արդէն, Թռչունրից ձայնով կարաւը մտածէ, ի հարկէ բխլրիւը չի զատւի վարդին նորան արգիլող վրաւը մտածէ:

### Հայրը

Արժան է վայելես աղքատ պետութիւն Բայց քառասուն վրան չի դառնալ մէկ տուն, Գեկավար մի որբան լինի իմաստսն Պարձեալ ալ, ար է կոծուած նաւը մտածէ:

### Պատմոս

Արենքը, արհմատը, հարաւ և հիւտիս, Աստուած օրհնել է հաստատ բառակուռ Ճիշ արուսեակ հորիզոնից երբ զայ զտո Հրացայտեալ և խոնեւը մտածէ:

### Հայրը

Սանդրոսի ցաւերը կրկին հեծեց, Փայտին որզը կուտէ հանդէրձին էլ ցէց, Իմ սիրոն որգեակ, վառար այստեղ միծ Իմ ու բո զատ արա լաւը մտածէ:

### Պատմոս

Հայր մի տար Պատմոսիս այդ մահուան բօթը, Միջնորդ է առ Աստուած, սրբոց ազօթը. Բրուտին չէ զժուար ամէն անօթը Երբ իւր արհնեստն է կաւը մտածէ:

Երգերը վերջացնելուց յետոյ, թագաւորը իւր

Երկրորդ աստիճանի մատանին տուեց Պատմոսին,  
Երկրորդ կառէմի մէջ նստեցնել տուեց և հրամա-  
յեց ման ածել բազարի փարզներում մունետիկ-  
ներ կանչել առել, որ Պատմոսի է թագաւորի սր-  
գեղիր ժառանիը, թագաւորի հրամանը խիսյն կա-  
տարեցին: Այդ ժամանակ Սանդրոսի ուշքը վնաց,  
նուազեց Պատմոսի համար, բայց Պատմոսը այնտեղ  
չէր: Բազարատը հասաւ տեղից բարձրացրեց Թար-  
զոհալը և նրան օգնեց: Թագաւորը այդ տեսնելով  
հարցրեց թէ ի՞նչ մարդ է, այդ: Դիւրհարին բացա-  
տրեց որ Պատմոսի հայրն է: Թագաւորը կարծում  
էր թէ դրանք լրտեսներ են եկել են այստեղ սիր-  
ուը թնդաց և բարկութիւնից գլուխը տարուբերեց:  
Փիշիանը երբ նկատեց այդ, աշբատ Բազրատին ի-  
մաց արեց: Բազրատը երեսի վերայ ընկատ, եօթն  
անզամ ծուներ դրեց և յետոյ կանզնեց թագաւորի  
առաջ: Թագաւորը հարցրեց. «Ինչ ինքիր ունիս»:  
Բազրատը առաց որ բերանացի շեմ կարող առել  
թոյլ տուէր երգեմ. թագաւորը թոյլ տուեց:

Արբայ, հոգի, ջուրդ ինձ հետ ծահօթ է,  
Արդար աշխատելուս ծառաներն են վկայ.  
Ճշմարիտ հոգու տէրը ընտրեալ անօթ է,  
Թէ իդուր կատորոսի լոռներն են վկայ:

Այսրան ժամանակ է ժառայում աստ,  
Պատութիւն մի չունիմ կամ զործ մը նուառու.

Լրտեսաց համբաւներ մի անիր մեղ փառու,  
Մոլորուած ոչխարին դասներն են վկայ:  
Նենկ ազգ ու ազինը ունին երամներ,  
Աստիճան, աստիճան նստած վայր ու վեր,  
Աստուած ստեղծել է մարդն որպէս պատկեր,  
Ջարժելու ոտրերն ու ձեռներն են վկայ:  
Թագաւոր զու ունիս զլխուղ սոկէ թագ,  
Վերսուէն է տուած ով է հակառակ,  
Բազրատափս սրտին մի բցիլ կրակ,  
Սուանց եղբայր սղջ չեմ, մեռնելի է վկայ:

Թագաւորը Բազրատի երգի իմաստը հաս-  
կանալով, նրան էլ տուեց սորտաելատութիւն:  
Սանզրուսին էլ նորա ինչորիքի համեմատ տուեց  
այգեպանութիւնը, Սանզրոսի նպատակն էր, որ  
այնտեղ պահպանէր օգապարիկները: Յետոյ թա-  
գաւորը կառէտներ բերել առեց, մէկի մէջ նստե-  
ցին Բազրատը և Պատմոսը, միւսի մէջ իրանը և  
իշան իրանց պալատը: Այստեղ թագաւորը կանչեց  
իւր պալատականներին, որպէս զի խորհրդակցեն սը-  
րանց գործի նշանակելու մասին: Ֆէզիհան սինօ-  
թապետը ասաց, որ հայր թագաւոր, չպէտք է  
զեռ շտապել, պէտք է լաւ մտածել հետեանրի մա-  
սին, սրանը անփորձ մարդիկ են, պալտտ տեսած,  
զործի մէջ մտած չեն: Մի բանի օր փորձենը,

տեսնենք թէ յարմար են, այն ժամանակ սրտիկ փափազը կատարիր: Ֆէզիհնանը այսպէս էր տառւմ, որովհետեւ ինըը աշք ուներ գահին, որովհետեւ ինըը թագաւորի բեռու որդին էր: Թագաւորը ընդունեց իշխանի առաջարկութիւնը: Թագաւորը Պատմոսի վիզը ոսկէ մանեակ զցեց, բեհեղներ ու կերպաներ հաղցրեց: Բագարատին ընծաներ տըռեց և իրաւոնք տուեց իր զործերի մէջ համարձակ մտնել ևս բան օր ժամանակ տուեց փորձառութեան համար: Պատմոսն ու Բագարատը մի քանի օր ընտանեկան կերպով ժառայեցին:

Մի հանդիսաւոր օր թագաւորը կանչեց և յայտնեց թէ զնացէք, ուրախութիւն արէք, ձեր հարսանեաց ժամանակը մօտեցել է: Պատմոսը, Բագարատը և Թարլոհալին թագաւորի և թակունու ձեռները համբաւեցին, զուրս ելան պալատից կառը նստեցին և զիմեցին զէպի պարտէզները: Պատմոսը սազն տուաւ ձեռքը և պարտիզում երգեց այսպէս.

Արի իմ սիրական արի  
Երթանք օգապարբ տեսնենք  
Վերջի օրերս եզաւ բարի,  
Փախչելու հեարը տեսնենք:

Փառք տանք Աստուծոյ հնարքին  
Որ մեզի հասուց այս փառքին  
Ելնենք թեաւորաց շարքին,  
Եջնենք մեր աշխարհը տեսնենք:

Երդը վերջացնելուց յետոյ էլ ժամանակ չկորցրին պատրաստեցին օգապարիկները, չորս հոգով նստան և սկսեցին բարձրանալ և կարծ ժամանակում սլացան օդի մէջ: Այդտեղ եկած մարզիկ իւկոյն խմաց տուին թագաւորին, մինչի թագաւորի պատրաստութիւր նրանը անհետացան և հասան Փարիզ բագարը այստեղ ճաշելուց յետոյ կրկին նստան օգապարիկ և հասան Բիւլանդիա բագարը: Սյուել հոգմը արգելեց նրանց գնալը, զբա համար օգապարիկը տւին մի անզլիացի վաճառականի և զբա փոխարէն ստացան չարս կրակուտ արաբական ձիեր: Այստեղ մեծ ընծաներ պատրաստեցին ոսկէ տակառի վերայ և ներկայացան: Սուլթան Մուրազին: Սուլթանը երբ տեսաւ Պատմոսի վրայի շրանշանները, ուզեցաւ տեղից կանգնել և շատ տարակուուած հարցրեց նրանց զարտեան մասին: Պատմոսը տասց, մի երկմանիք, եթէ թոյլ կտաք, ևս իմ ցաւո երգով կպատմեմ արքայիս: Սուլթանը թոյլ տուեց: Պատմոսը երգեց:

Թագաւորաց թագաւոր կայ երկինքը  
Արգար դատաստանը այստեղ երկաց  
Ոմանք միայն կասեն, ոմանք երեր ինըը  
Նա մոլոքետաց առող երկաց:

Ամենայն ինչ կամ նիւթ ունի բարկութիւն  
Ազրատին էլ պահպանում է բարկութիւն

Մեծամեծաց միշտ չի լինի բարկութիւն  
Մահապարախց արիւնը այստեղ երկաց:

Այս աշխարհից շատ անցկացաւ արքային  
եր ափառջր ընդէմ գարձաւ այր կայնն  
ես մեծ յատավ գիմեցի գեղ արքային  
Պատմոսին փրկութիւն այստեղ երկաց:

Երգից յիտոյ Սուլթանը հարցրեց թէ, ինչ է  
Նրանց խնդիրը: Պատմոսը խնդրեց, որ Բազարա-  
տին ներէ և բանտարկուածներին ազատէ: Սուլթա-  
նը կատարեց նրանց խնդիրը. ընծաների կլօն էր  
յիտ գարձրեց Պատմոսին, այս ազատման տուժիւ  
հաւաքւեցան նրանց բոլոր բարեկամները և սկսե-  
ցին կերտիում ուրախութիւն անել: Յետոյ պատ-  
րաստեցին ճանապարհ ընկերու. Բազարատը սիր-  
ութ լցուած սկսեց երգել.

#### Բազարատ

Սարին, ձորին հեշտալի է գիւրին է  
Քանից եղբօրը բաժանուիլը զատուիլը  
Եղբայրսիրութիւնը իսկ և անդին է  
Գժուար է, բարոյ արմատից հատուիլը:  
Պատմոս

Բոլոր վետեր ժողովում է ծովի մէջ  
Պաղ աղբիւրից հեռանալը գժուար է  
Այդ խօսքերը սիրոս զրին բովի մէջ  
Կրիին ծուլի հեռանալի գժուար է:

#### Բազարատ

Դու ինձ արի ելիր, գու ինձ լուսին  
Այժմս սրակէս թնդնիս խաւարին փուսին  
Արգեօր հարաւ գանեմ քեզ թէ հիւսիսին  
Գժուարին է այս ցաւից ազատուիլը:  
Պատմոս

Ես մի պարտէզ գու այզեպան ջրեցիր  
Եմ ցաւերս անձգ աւար կրեցիր.  
Իսկ յաւիտեան կտակազիր զրեցիր  
Եռանց կտակ մեռանիլը գժուար է:

#### Բազարատ

Բազարատիս սիրալ մինչ մահ չի գատւում  
Մէր ասածգ վերստին է հաստատում  
Ամենայն մարդ իրեն խզճովին է գատւում  
Հնասկացովին կրակ է, խրատուիլը:

#### Պատմոս

Պատմոսն իմ շեմ զատիլ բո սէրդ սրակէս  
Որժամ տխուը լինեմ շուտ առնեմ հանդիս  
Եղբայրանաս լիբանանու պէս  
Բարձր ծառին կտանալը գժուար է:

Երգը վերջացնելուց յիտոյ իրար մնաս բարե  
առացին և բաժանուեցան. Բազարատը իւր երկրը  
զեաց իսկ Պատմոս, հայրը և Թարգօհալին նաւ նըս-  
տան և ճանապարհ ընկան զէպի Փոթի. այնտեղից  
կառըով եկան հասան Երկանի նահանգը: Այդտեղից  
լուր տարան մօրը և եղբօրը, սրանը կառքերով դէմ

ხელმისამართი მომდევნობის მიერ განვითარებული არის, ფათვის  
ყვაველად, მატერიალური სისტემის მიერ განვითარებული არის.

9257

Ամեն ծառ ու ծաղիկ ունի հաս ու համ,  
Բայց մօր կաթից տեսլ տնուշ բան չկտոյ.  
Բոլոր ազգ և աղինք ունի իւր երամ  
Ըստից տէրէս մէկիմ հրաման չկայ:

卷之三

Կարգացէք Պատմոսիո պայմանագրերը  
Սրբիո մէջ խոց թողին սիրու սրերը.  
Հայաստանի անմահական ջրերը  
Ըստ երկիր ման եկայ նոյն նմոնի չկայ:

Ելտեղից կառը նոտեցին և գնացին տուն ու հարսանիքի պատրաստութիւն տեսան. Սիմբասոնն էլ նշանուած էր. երկու եզրօր հարսանիքն էլ սփօր եղաւ. եօթն օր եօթն գիշեր կիրակ խմեցին ուրախացան և փառարանեցին Աստուծուն:

2013



Ham 1000 304

Carn  
59:

4166 b 30 409.

